«ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ «ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«.....» «.....» 2019թ. N.....-Ն

«ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1515-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ

«ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ

ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, 60-րդ, 61-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 62-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Թույլատրել «ՀՀ առողջապահության նախարարության «Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ Երևան քաղաքի Արցախի 8բ հասցեում գտնվող 78,599.8 հազ. դրամ գնահատված արժեքով անշարժ գույքը՝ 415,49 քառ. մետր մակերեսով շենք-շինությունը և դրանց օգտագործման ու սպասարկման համար հատկացված 0,07172 հեկտար հողամասը՝ 7681.2 հազ. դրամ կադաստրային արժեքով (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական՝ N0113474, տրված՝ 09.07.1999թ.)՝ համաձայն N 1 հավելվածի, մասնակի հատուցմամբ (իրական արժեքից ցածր արժեքով)՝ 26,967.9 հազ.դրամ արժեքով, իսկ 921.2 հազ.դրամ հաշվեկշռային արժեքով շարժական գույքը՝ համաձայն N2 հավելվածի, անհատույց օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքը ձեռք բերելու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին 2019 թվականի 3-րդ եռամսյակում հատկացնել 26,967.9 հազ.դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների ձեռքբերում» հոդվածով):
3. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման NN 3, 4, 5, 11, 11.1 և 12 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 3, 4, 5, 6 և 7 հավելվածների:
4. Սույն որոշման 5-րդ կետի 1)-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «ՀՀ առողջապահության նախարարության «Երևանի երկաթուղու պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Արցախի 8բ, պետական գրանցման համարը՝ 278.070.01147):
5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և

ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշման 2-րդ կետում նշված գումարը ստանալուց հետո երկամսյա ժամկետում ապահովել անշարժ գույքի առուվաճառքի և շարժական գույքի անհատույց օտարման պայմանագրերի կնքումը՝ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման ծախսերն իրականացնելով Ընկերության միջոցների հաշվին, իսկ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի միջոցների հաշվին, որից հետո 20-օրյա ժամկետում ավարտել գույքի հանձնման-ընդունման աշխատանքները,

2) սույն որոշման 5-րդ կետի 1)-ին ենթակետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների ավարտից հետո 2-ամսյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ՝ նշված գույքի հետագա տնօրինման վերաբերյալ,

3) Ընկերության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել լուծարման հանձնաժողով՝ կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ) և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղար) ներկայացուցիչներին,

4) լուծարման հանձնաժողովի ստեղծման պահից հետո մեկամսյա ժամկետում ապահովել Ընկերության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին:

6. Սահմանել, որ՝

1) Ընկերության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը,

2) Ընկերության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքի առկայության դեպքում այն հանձնվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N1

ՀՀ կառավարության 2019 թվականի

..... -ի թիվ .....որոշման

ՑԱՆԿ

«ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-Ի ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ

դրամ

Հ/Հ	**ԱՆՎԱՆՈՒՄԸ**	**ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ**	**ՄԱԿԵՐԵՍԸ (քառ.մ)**	**ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ**	**ՀԱՇՎԵԿՇՌԱՅ ԱՐԺԵՔԸ**
1.	Պոլիկլինիկայի շենք	1983	379,59	4660000	1151000
2.	Ավտոտնակ-պահեստ	1983	35,9	782000	83800

Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 7681212 դրամ:

Հավելված N2

ՀՀ կառավարության 2019 թվականի

..... -ի թիվ .....որոշման

ՑԱՆԿ

«ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-Ի ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ

դրամ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ	ՔԱՆԱԿԸ (հատ)	ՍԿԶԲՆԱԿԱ ԱՐԺԵՔԸ
1.	Դուռ մուտքի	2013	2013	1	58400
2.	Կամերա-տեսագրող սարք	2013	2013	1	300000
3.	Ավտոկլավ	2015	2015	1	568170
4.	ՀԴՄ	2016	2016	1	56000
5.	Արյան ճնշման չափման սարք	2017	2017	1	60052
6.	Ավտոմեքենա ՌԱՖ, 754-51	1989	1996	1	301000
7.	Ատամնաբուժական սարք բազկաթոռով ЮС-5М	1997	1997	1	1500000
8.	Ատամնաբուժական սարք բազկաթոռով UST	1997	1997	1	806000
9.	Ատամնաբուժ սարք ЭРГОСТ АР-() 90-С1	1996	1996	1	3000000
10.	Ռենտգեն ապարատ Filips 304239	1996	1996	1	1433000
11.	Սարքավորում պոլինարկոն	1996	1996	1	780000
12.	Միկրոսկոպ բիոլ LOMO	1996	1996	1	44000
13.	Միկրոսկոպ բիոլ MBP-1	1996	1996	1	36000
14.	Մոնիտոր գլյուկոզա չափիչ	1996	1996	1	60000
15.	Գլյուկոմեր ULTRA	1996	1996	1	36000
16.	Օվտալմոսկոպ	1996	1996	1	50000
17.	Օվտալմոսկոպ	1996	1996	1	50000
18.	Դարսոնվալ	1996	1996	1	40000
19.	Սարք UBZ-30	1996	1996	1	110000
20.	Ուլտրաձայնային UZT-101	1996	1996	1	160000
21.	Սուխաժար	1996	1996	1	43000
22.	Էլ կարդիոգրաֆ EKG IT-04	2003	2003	1	130000
23.	Ատամնաբուժական աթոռ	1996	1996	1	90000
24.	Ատամնաբուժական աթոռ	1996	1996	1	50000

25.	Տապչան	1996	1996	2	93900
26.	Միկրոսկոպ MLD-1	1996	1996	1	370000
27.	Լուսատու սարք	2001	2001	1	60000
28.	Սնդիկակվարցային սարք	2001	2001	3	180000
29.	Հոսք 1	2001	2001	1	150000
30.	Ինգալյատոր	2000	2000	1	26000
31.	Սարք Բերնար	2000	2000	1	20000
32.	Օվտոլմոլ ապակի հավաքածու	2000	2000	1	192000
33.	Կոնտեյներ փոխանցող հարմարանքներ	1996	1996	2	88000
34.	Մեշոկ ''AMBU''	2003	2003	1	30000
35.	Սուխաժար	2003	2003	1	43000
36.	Սեյֆ	1996	1996	1	86000
37.	Սեյֆ	2002	2002	1	94000
38.	Ատամնաբուժական ախտահանիչ ''FRTGOSTFR''N10510	2004	2004	1	159000
39.	Միկրոալիք վառարան	2004	2004	1	60000
40.	KFO UZ-2 N801870	2004	2004	1	175000
41.	Բժշկական պահարան	2004	2004	3	400000
42.	Պրոցեսոր	2003	2003	1	176000
43.	Սեղան տնօրենի	2003	2003	1	70000
44.	Երկաթե նստարան (5 նստատեղ)	2003	2003	1	60000
45.	Երկաթե նստարան (3 նստատեղ)	2003	2003	1	30000
46.	Ատամնաբուժական աթոռ	2005	2005	1	32000
47.	Պտտվող աթոռ	2005	2005	1	35000
48.	Միկրոշարժիչ	2005	2005	1	41500
49.	Շարժիչ օգտագործված	2006	2006	1	42000
50.	Մոնիտոր	2008	2008	1	60000
51.	Տրուբ ծայրակալ՝Sigl Energi''	2008	2008	1	36000
52.	Լուսապոլիմերիզ լամպ	2008	2008	1	57000
53.	Հաշմանդամի քայլասայլակ	2010	2010	1	56000
54.	Ալկոմետր	2010	2010	9	594000
55.	Ախտահանիչ սարք	2013	2013	1	30000
56.	Ճնշման գործիք	2014	2014	2	157200
57.	Ալկոտեստ	2014	2014	2	101000
58.	Արյան ճնշման չափիչ սարք	2015	2015	7	80769
59.	Ալկոտեստեր	2016	2016	3	222222
	Ընդամենը			**83**	**13869213**